



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«30» 08 2018թ.

No 06/3-1/50952-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2018թ.
թիվ Պ-30 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կարգը՝

- ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վերամշակման նպատակով «Վերամշակում» մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում,

- ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում» մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված գույքի արտահանման դեպքում:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 65-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում է ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման նպատակով «Վերամշակում» մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով

Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում հումքի վերամշակման աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը,

- 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում է ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված գույքի արտահանման դեպքում այդ գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի մատակարարումը՝ նորոգողի (վերանորոգողի) կողմից:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ,

1) ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի դրույթները վերաբերում է վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետությունից հումք ներմուծած և հետագայում այդ հումքի վերամշակման արդյունքում ապրանքներ արտահանած ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությանը (գրությամբ նշված դեպքում՝ «Ա» կազմակերպությունը),

2) ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերի դրույթները վերաբերում է ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծած և վերանորոգումից հետո վերանորոգած գույքն արտահանած ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությանը (գրությամբ նշված դեպքում՝ «Ա» կազմակերպությունը):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



 Recoverable Signature



VERIFIED OCSP 8/30/2018 21:15:25 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ